

15 հունվարի 2015 թվականի N 13 - Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 1998 ԹՎԱԿԱՆԻ
ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 30-Ի N 864 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ
Մ Ա Ս Ի Ն

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի հուլիսի 31-ի N 777-Ն որոշման 1-ին կետի 1-ին ենթակետով հաստատված՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի գործունեության միջոցառումների ծրագրի 24-րդ կետը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը **ո Ր Ո Շ ՈՒ Մ Է**.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 1998 թվականի դեկտեմբերի 30-ի «Բնօգտագործման վճարի դրույքաչափերի մասին» N 864 որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները՝

1) որոշման 2-րդ կետում՝

ա. ուժը կորցրած ճանաչել «ե» ենթակետը,

բ. «թ» ենթակետի երկրորդ, երրորդ և չորրորդ պարբերություններում «բնապահպանական» բառը փոխարինել «համապատասխան լիազոր» բառերով.

2) որոշմամբ հաստատված՝ բնօգտագործման վճարի դրույքաչափերի երկրորդ բաժնի 10-րդ կետի՝

ա. «ա» ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«ա) աղի յուրաքանչյուր տոննայի արդյունահանման համար՝

քարաղի տեսքով՝
աղաջրի տեսքով՝

660 դրամ
70 դրամ»,

բ. «բ» ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«բ) հանքային ջրերի յուրաքանչյուր խորանարդ մետրի արդյունահանման համար՝

արդյունաբերական նպատակով՝ 5650 դրամ

բուժական նպատակով՝

- բալնեոբուժման (լոգանքներ, ցնցուղ, հիդրոմեր-
սում, հոգնա, խմելու միջոցով և այլն) համար՝

300 դրամ

- ըմպելասրահներում օգտագործման համար՝

0 դրամ

ածխաթթու գազ ստանալու նպատակով՝

230 դրամ

ռեկրեացիոն (հանգստի նպատակով
լողավազաններում օգտագործելու) նպատակով՝

75 դրամ»,

գ. «գ» ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«գ) արտադրված ածխաթթու գազի յուրաքանչյուր խորանարդ մետրի համար՝

«Ջերմուկ» հանքավայր՝ 60 դրամ

«Արզնի» հանքավայր՝ 70 դրամ

«Հանքավան» հանքավայր՝ 60 դրամ

«Բջնի» հանքավայր՝ 55 դրամ

«Լիճք» հանքավայր՝ 45 դրամ

«Սոլակ» հանքավայր՝ 45 դրամ

«Քարաշամբ» հանքավայր՝ 60 դրամ

«Արզական» հանքավայր՝ 115 դրամ

«Սայաթ-Նովա» հանքավայր՝ 115 դրամ

այլ հանքավայրեր՝ 45 դրամ».

3) որոշմամբ հաստատված՝ բնօգտագործման վճարի դրույքաչափերի չորրորդ

բաժնի՝

ա. 2-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«2. Երեսապատման քարերի, շինարարական քարերի, լցանյութի և բալաստային

հումքի մարված պաշարների յուրաքանչյուր խորանարդ մետրի համար՝

Օգտակար հանածոյի անվանումը	Մարված պաշարից երեսապատման քարի,	Դրույքաչափը (դրամ)		
		երեսապատման քարը	շինա-քարը	լցանյութը և բալաստային

	շինարարի ելքը (տոկոս)			հումքը
Անդեզիտաբազալտ, անդեզիտ, բազալտ, հիալոբազալտ, դոլերիտային բազալտ, լիպարիտ և նմանատիպ այլ տարատեսակներ	մինչև 30	1125	450	135
	30-40	1350	630	
	40-50	1575	720	
	50-ից ավելի	1800	900	
Գաբբրոներ, գրանիտներ, տուֆաավազաքարեր, մոնցոնիտներ, գրանոդիորիտներ, գրանոսիենիտներ և նմանատիպ այլ տարատեսակներ	մինչև 30	3150	-	180
	30-40	4500	-	
	40-50	5850	-	
	50-ից ավելի	6750	-	
Կոնգլոմերատներ, կոնգլոբրեկչիաներ և նմանատիպ այլ տարատեսակներ	մինչև 20	3600	-	-
	20-30	4500	-	
	30-40	5400	-	
	40-ից ավելի	6300	-	
Մարմարներ, մարմարացված կրա- քարեր, դիաբազային պորֆիրիտներ, դիաբազներ, պորֆիրիտներ և նմանատիպ այլ տարատեսակներ	մինչև 20	2700	-	1350
	20-30	3600	-	
	30-40	4500	-	
	40-ից ավելի	5400	-	
Տուֆեր, կրաքար և նմանատիպ այլ տարատեսակներ	մինչև 30	900	315	90
	30-40	1125	450	
	40-50	1350	585	
	50-ից ավելի	1575	675	
Ֆելզիտային տուֆեր, տրավերտիններ, տուֆաբրեկչիաներ, չեղկվող տուֆա- ավազաքարեր և նմանատիպ այլ տարատեսակներ	մինչև 30	2025	675	90
	30-40	2250	900	
	40-50	2475	1125	
	50-ից ավելի	2700	1350	
Հրաբխային խարամ և նմանատիպ այլ տարատեսակներ		-	-	135
Պեմզաներ, պեոլիտներ և նմանատիպ այլ տարատեսակներ		-	-	157
Ավազակոպճային, ավազակոպճազլա- քարային խառնուրդներ և նմանատիպ այլ տարատեսակներ		-	-	157

Սույն կետով սահմանված դրույքաչափերը կիրառվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փորձաքննություն անցած և հաստատված հանքարդյունահանման աշխատանքների կատարման նախագծով նախատեսված օգտակար ելքի չափերի՝ համապատասխան մարված պաշարների ամբողջ ծավալների նկատմամբ: Տեստեսական գործունեության տեսակների դասակարգիչներին համապատասխան հանքագործական գործունեությունից տարբերվող գործունեության արդյունքում ստացված արտադրանքին համապատասխանող մարված պաշարների ծավալների համար կիրառ-

վում է սույն կետով նախատեսված համապատասխան ամենաբարձր հաստատագրված դրույքաչափը: Հանքարդյունահանման աշխատանքների կատարման նախագծով լցանյութերի և բալաստային հումքի ելք նախատեսված չլինելու դեպքում դրան համապատասխանող մարված պաշարների ծավալների նկատմամբ կիրառվում է շինաքարի կամ երեսապատման քարի օգտակար ելքի չափին համապատասխան հաստատված հաստատագրված դրույքաչափը:»,

բ. 3-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«3. Շինանյութերի արտադրության հումքի մարված պաշարների յուրաքանչյուր խորանարդ մետրի համար՝

Օգտակար հանածոյի անվանումը	Դրույքաչափը (դրամ)
Ցեմենտի հումք՝	
- կավեր, կրաքարեր, տրավերտիններ	360
- մագնեզիումասիլիկատային ապարներ	150
Կրաքար՝ կիր ստանալու համար	112
Կավեր	90
Գիպսատար կավեր	900
Բնական հանքային ներկեր	4500

»,

գ. 4-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«4. Գունազեղ քարերի հումքի մարված պաշարների յուրաքանչյուր կիլոգրամի համար՝

Օգտակար հանածոյի անվանումը	Դրույքաչափը (դրամ)
Վանակատ (օբսիդիան)	22
Լիսովենիտ	2250

Օգտակար հանածոյի անվանումը	Դրույքաչափը (դրամ)	
	մենաքարը, երեսապատման քարը	լցանյութը, խճաքարը՝ որպես արհեստագործական

		քարերի հումք
Օնիքսանման մարմար	135	22

»,

դ. 5-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«5. Մետաղագործական, քիմիական, թեթև և արդյունաբերության այլ ճյուղերի հումքի մարված պաշարների յուրաքանչյուր միավորի համար՝

Օգտակար հանածոյի անվանումը	Չափի միավորը	Դրույքաչափը (դրամ)
Անդեզիտ, անդեզիտաբազալտ (թթվակայուն), ռիոլիտ դացիտային տուֆ	տ	90
Բարիտ	տ	180
Բենտոնիտ	տ	2500
Դիատոմիտ	խոր. մ	1150
Դոլոմիտ	տ	180
Դունիտ և պերիդոտիտ	տ	450
Մագնեզիումասիլիկատային ապարներ	տ	150
Կվարցիտ (ապակու հումք, ֆլյուս)	տ	1600
Հրակայուն կավեր	տ	230
Պեռլիտ	խոր. մ	2050
Ցեոլիտ	խոր. մ	1800
Հոկանյութեր	կգ	23

»
:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ**

Հ. ԱՔՐԱՀԱՄՅԱՆ

2015 թ. հունվարի 19
Երևան